ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.12.2015թ.
266-ի 1

Ծարավ Աղբյուր համատիրության կառավարիչ
պարոն Հովհաննես Ստեփանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ստեփանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ծարավ Աղբյուր համատիրության ընդհանուր ժողովների արձանագրությունները կամ քաղվածքները մայիս ամսից մինչ օրս,
2. Ծարավ Աղբյուր համատիրության վարչության 2015թ.-ի ժողովների արձանագրությունները եւ/կամ քաղվածքները,
3. Սեփականատերերի անվանական վճարումների, պարտքերի ցուցակները 2015թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ,
4. Քաղվածքներ Ծարավ Աղբյուր համատիրության բյուջեի կատարման ամսական ամփոփ հաշվետվություններից:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան